Հաստատում եմ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«14» սեպտեմբերի 2022 թ.

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցող Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի «Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատված է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի 2022թ. սեպտեմբերի 14-ի նիստում: Նիստին մասնակցում էին ք.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյանը, պ.դ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Մելիքյանը, պ.գ.թ., դոցենտ Գ.Գ.Գևորգյանը, ք.գ.թ., դոցենտ Ն.Վ.Գևորգյանը, ք.գ.թ. Վ.Կ.Աղասարյանը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է անջատողականության որպես սոցիալ– քաղաքական դրսևորման համակողմանի ուսումնասիրությամբ, ԵՄ-ի եռաստիճան վերազգային-ազգայի^ տարածաշրջանային ինստիտուցիոնալ համակարգում Կատալոնիայի անջատողականության դեպքի ուսումնասիրությամբ: Անջատողականությունը որպես կենտրոնախույս դրսևորում անմիջականորեն սպառնում է ԵՄ-ի ինտեգրացիոն գործընթացների արդյունավետությանը, և ըստ այդմ անհրաժեշտություն է առաջանում նորովի մեկնաբանել ԵՄ-ի վերազգային ինստիտուտների և անդամ-պետություններում գործող տարածաշրջանային ինքնավարություն ունեցող ինստիտուտների միջև քաղաքական հարաբերությունների շրջանակները: Ինչպես Իսպանիայի, այնպես էլ ԵՄ-ի քաղաքական համակարգում սոցիալ-քաղաքակա ն հիմք ունեցող անջատողական շարժումների դերակատարությունը գնալով մեծանում է, և ատենախոսական աշխատանքում նաև մանրամասն անդրադարձ կա ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում տարածաշրջանային ինտիտուտների ունեցած քաղաքական դերակատարությանը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև Արցախյան հակամարտության իրավական և քաղաքական իրողությունների մեկնաբանման նպաստման տեսանկյունից: Ատենախոսական աշխատանքի առաջին գլուխն ամբողջությամբ վերաբերում է անջատողականության, սեցեսիայի,

ինքնավարության և այլ հայեցակարգային հասկացություններին, և անշուշտ, նման հասկացությունների

նորովի մեկնաբանումը կնպաստի Արցախյան հակամարտության իրավական և քաղաքական իրողությունների խեղաթյուրման կանխման համար։ Հարկ է նշել նաև, որ անջատողականության հիմնախնդրի ուսումնասիրման գործում Կատալոնիայի դեպքի ուսումնասիրումը հնարավորություն կտա նաև հետազոտել արևմտաեվրոպական այլ անջատողական շարժումների գործունեությունը, քանի որ ինչպես Կատալոնիայի, այնպես էլ ԵՄ-ի անդամ-պետություններում ակտիվություն դրսևորող անջատողական շարժումների զգալի մասի հիմքում ընկած են սոցիալական, տնտեսական բաշխումների և ինքնակառավարման լիազորությունների մեծացմանը վերաբերող խորքային պատճառներ։

Կատալոնիայի անջատողականությունը համարվելով ԵՄ-ի ամենաակտիվ քաղաքական շարժումներից մեկը մեծ ազդեցություն է գործում Իսպանիայի քաղաքական գործընթացների վրա սպառնալով նրա տարածքային ամբողջականության պահպանմանը։ 2017 թ. Կատալոնիայի անջատման հանրաքվեի անհամաձայնեցված անցկացումը, Իսպանիայի կենտրոնական իշխանության կոշտ արձագանքը և դրան հաջորդած քաղաքական գործընթացները Իսպանիայում ներքաղաքական ճգնաժամի առաջացման պատճառ հանդիսացած Իսպանիայի ներքաղաքական ճգնաժամի առաջացումը ազդեցություն գործեց նաև ԵՄ-ի քաղաքական համակարգի վրա բացահայտելով ԵՄ-ի ինստիտուտների ներքաղաքական ճգնաժամերի հաղթահարման գործիքակազմի կիրառման արդյունավետության խնդիրներ։

Ատենախոսության նպատակներն են անջատողականության հիմնախնդրի քաղաքական չափումների վերհանումը, Իսպանիայում Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունների, ինչպես նաև Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ազդեցության բացահայտումը։ Ատենախոսական աշխատանքի նպատակների իրագործման համար ատենախոսը կարողացել է առանձնացնել ատենախոսական նպատակներից բխող խնդիրներ, որոնք էլ համակարգված ուսումնասիրված են։ Ատենախոսությունը համակարգված գիտական ուսումնասիրություն է, ինչպես նաև աշխատանքը պարունակում է առաջարկված խնդիրների համապարփակ լուծում։

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, ութ ենթագլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից։ Ատենախոսության եզրահանգումները գիտական են, ատենախոսական աշխատանքում սահմանված խնդիրների լուծումները ամբողջությամբ արտացոլված են եզրակացություններ բաժնում։

Ատենախոսության «Անջատողականության հայեցակարգային հիմքերի վերլուծությունը և անջատման գործընթացի առանձնահատկությունները» խորագրով առաջին գլխում հանգամանորեն դիտարկվել են անջատողականության հայեցակարգային նոր մոտեցումները, անջատման իրավական և քաղաքական մեկնաբանման առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկվել է «անջատողականություն» հասկացության նոր սահմանում։

«Կատալոնիայի անջատողականության առանձնահատկությունները և անջատողականության դեմ պայքարի Իսպանիայի քաղաքականությունը» խորագրով երկրորդ գլխում դիտարկվել են Իսպանիայի քաղաքական գործընթանցներում անջատման ձգտող ինքնավար համայնքների և կենտրոնական իշխանության իրավահարաբերությունները, Իսպանիայի անջատողականության դեմ պայքարի քաղաքականության առանձնահատկություններն, ինչպես նաև խաղերի տեսության հաջորդական գործողությունների մոդելավորմամբ վերլուծության է ենթարկվել Կատալոնիայի

հակամարտությունդ Ուշագրավ է խաղերի տեսության կիրառումը կոնֆլիկտաբանական հետազոտությունների ոլորտում, որը նմանատիպ վերլուծությունների իրականացման համար համարվում է որպես հետազոտության նորույթ:

«Եվրոպական միության ինտեգրային գործընթացների ազդեցությունը Կատալոնիայի անջատողականության ակտիվացման վրա» խորագրով երրորդ գլխում Կատալոնիայի անջատողականության ակտիվացման միտումներն ուսումնասիրված են ԵՄ-ի ինտեգրային գործընթացների համատեքստում

Համակարգված վերլուծության է ենթարկվել նաև ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի տարածաշրջանային ինստիտուտների ունեցած դերակատարության վերաբերյալ

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի «Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով» ատենախոսական աշխատանքը կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար մեր կողմից առաջարկվող հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսական աշխատանքի առաջին գլուխն ամբողջությամբ նվիրված է անջատողականության հայեցակարգային հիմքերի վերլուծությանը: Ողջունելի է, որ անջատողականությունը առավելապես կապվում է ոչ թե էթնոքաղաքական հիմնախնդիրների, այլ սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների հետ Հատկանշական է նաև, որ անդրադարձ է կատարվում «սեպարատիզմ» և «սեցեսիոնիզմ» հասկացությունների

առանձնահատկություններին և հատկապես այն հանգամանքին, որ այս երկու հասկացությունների կիրառումը ամբողջությամբ հակասում է Արցախյան հակամարտության իրավական և քաղաքական իրողություններին Այնուամենայնիվ, աշխատանքը կշահեր, եթե անջատողականության պատճառների և ակտիվացմանը նպաստող գործոնների շարքում քննարկվեր նաև անջատողականության քաղաքակրթական բաղադրիչի

2. Խաղերի տեսության շրջանակներում հակամարտությունների մոդելավորման նոր մոտեցումների

առաջքաշումը, հավելված բաժնում ներկայացված միաժամանակյա և հաջորդական գործողությունների մատրիցների կազմումը, Կատալոնիայի անջատողական հակամարտությունը նոր ռազմավարությամբ վերլուծելը, բավականին ողջունելի է:

Ատենախոսական աշխատանքում խաղերի տեսության հաջորդական գործողությունների շրջանակներում վերլուծության է ենթարկվել Իսպանիայի կենտրոնական իշխանությու^ Կատալոնիայի ինքնավար համայնք քաղաքական հարաբերությունների Կատալոնիայի անջատողականության հետագա զարգացման հնարավորությունների վերլուծությունն առավել համընդգրկուն կլիներ, եթե աշխատանքում խաղերի տեսության մաթեմատիկական մոդելավորմամբ խնդիրը դիտարկվեր նաև ԵՄ-ին Կատալոնիայի անդամակցության հավանականության վերլուծության իրականացման տեսանկյունից: Այս դեպքում Կատալոնիայի անջատողական գործընթացների արդյունքը հիմնականում կախված կլինի այն բանից, թե, արդյոք, ԵՄ-ն Կատալոնիան կդիտի որպես իր առանձին անդամի

3. Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի մեծ ուշադրություն դարձներ հետազոտական նոր մեթոդների կիրառմանը: Մասնավորապես, հաշվի առնելով հետազոտվող թեմայի առանձնահատկությունները, սցենարների մոդելավորման և փորձագիտական հարցազրույցների մեթոդները թույլ կտային հեղինակին ավելի ավելի բազմակողմանի վերլուծություն իրականացնել:

4. Աշխ ատանքը զերծ չէ որոշ տեխնիկական խնդիրներից, մասնավորապես օգտագործված գրականության ցանկի 82-րդ կետից սկսած առանձին տառային հերթականությամբ սկսում է էլեկտրոնային աղբյուրների բաժինը, սակայն մինչև դա բացակայում է «Էլեկտրոնային աղբյուրներ» նշումի

Նշված թերությունները սակայն չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը: Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով Հեղինակը հանդես է բերել ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություն: Մեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունի

Որոշեցին՝ **Ռաֆիկ Գուրդենի Ավետիսյանի «Անջատողականության հիմնախնդիրը Եվրոպական միության անդամ-պետություններում. Իսպանիայում անջատողականության առանձնահատկությունները Կատալոնիայի օրինակով»** թեմայով ատենախոսությունը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ
ժ.պ., ք.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյան

ք.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյանի ստորագրությունը

հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ. Ռ.Ս.Կասաբաբով